

ալ առ եւրոպական տէրութիւնն ուուի բակութեամբն անշուշտ այս խնդրոյն խաղաղական լուծումն առաջ կ'ուզուի Ռուսից վեհափառ կայսեր կողմանէ յետ ապահովելու արհեելեան քրիստոնէից վիճակը : Եթէ իգնատիէվ զօրավարին խօսքը հեղինակութիւն ունի այսպիսի դժուարակնուն ժամանակ մը աշխարհիս հանգստութեանը համար, յայտնի է թէ կրնայ խաղաղութիւն բերող ըլլալ :

* * *

Շուվալով կոմն ու իգնատիէվ զօրավարն Ռուսից քաղաքականութեան երկու երեսները կը ներկայացընեն : Մէկը իր ծագմամբը և լոնտրայի դեսպանութեան հանգամանքը, բարիզի ու Պելլինի հետ մտերահական վերաբերութեցմբը, կարծես թէ այն քաղաքականութեան խաղաղական երեսը կը ցուցընէ : Խաղաղութիւն եւրոպայի ցամաքին վրայ, և լուծումն արդի արևելքան դժուարակնուն խնդրոյն բոլոր տէրութեանց միջամտութեամբը . այսպիսի է ահա այն քաղաքականութեան նպատակը : Թերեւս Շուվալով կոմն ամենեին բան մը թելադրած չըլլայ այս խմաստով . բայց Ալեքսանդր կայսրն ու գլուխ չափ կ'աշխատի խաղաղութիւն պահելու, և ահա այսու դիտմամբ իրեն մտերիմ Շուվալով կոմն, որուն

վրայ ամեն վստահութիւն ունէր, զրկեց ի լոնտրա : Խակ իգնատիէվ զօրավարը կը ներկայացընէ հին-ռուս կուսակցութեան քաղաքական ու կրօնական տենչանքն, որ ոչ ինչ նուազ նախանձայոց է քան զիին-թուլք կուսակցութիւնն : Կը տենչայ որ սուրբն Ռուսիա իր առաջերութենէն ետշտառայ, կանգնէ խաչը փոխանակ կէս լուսնի, բոլոր Սլավանանչան իրենց հօրը՝ Զարին քաղաքական և կրօնական գերագահութիւնը, և որթոսորս հաւատքը ճառագայթէ միանգամայն թէ կոստանդնուպօլէտէն թէ Մոսկուայէն : Այս այս է այն կուսակցութեան ուղածը, և իգնատիէվ զօրավարն մեծ ծառայութիւն ըրած համարուեցաւ այս բանիս համար : Այս երկու քաղաքականութեան որը պիտի յաղթանակէ . արդեռք վեհափառ կայսեր քաղաքականութիւնն, որ խաղաղութեան պաշտպան հանդիսացաւ, թէ հին-ռուս կուսակցութեան քաղաքականութիւնն, որ հանդերձ ամենայն վտանգաւ պատերազմ կ'ուզէ : Այսպիսի է այն ահաւոր խնդիրն, որուն վրայ կը մտածուի հիմա 'ի Գետրըուրկ : Այս խնդրոյն լուծմանէն կը կախուի աշխարհիս խաղաղութիւնն ... և թերեւս այս երկու մարդկանց բաղդն ալ, որ են Շուվալով կոմն ու իգնատիէվ զօրավարը :

ՄԻԱՅԻՆԱՀԱՆԳԱՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀՆ

Այս տարի, Զ մարտի, ընտրուեցաւ Ամերիկայի Միացեալ-Նահանգաց Նախագահն, և 4 մարտի մտաւ պաշտոնին : անունն է Հեյզ (Հայզ) : Ինն ամիս Միացեալ-Նահանգները շարունակ յուղման մէջ էին այս ընտրութեանն համար, որ ամեն չորս տարին անդամ կը նորոգուի, և այսպիսի ալեկոծութիւն կը յարոցանէ, որ բաւական է

կործանել որ և իցէ երկիր, եթէ Միացեալ-Նահանգաց նման բոլորովին արտաքյ կարգի տնտեսական, քաղաքական և աշխարհագրական պայմաններ չունենայ: Խարդախսակը, նենդութիւնք, և բռնաբարութիւնք առ գուրս կային . արիւնհեղութիւնք հարաւային Նահանգաց մէջ: Եւ այս ամենն, որպէս զի համարին անուանելու նախագահ պատ-

գամաւորն որ ընտրուեցաւ . . . փոքրա
մասնութեամբ :

Համառօտիւ պատմենք այս ընտրու-
թիւնն , որ եզական կերպարանափո-
խութիւններ ունեցաւ :

Նախագահի ընտրութիւնն յլմերի-
կա երկու աստիճանաւ կը կատարուի .
այս կերպն հաստատուեցաւ Ազգաժո-
ղովով (Congrès) յամին 1792 ի սկիզբն
մարտի , և մինչև հիմա կը տեէ քանի
մը մանր բարեփոխութեամբք : Նախա-
գահն ու Փոխ-Նախագահը կ անուա-
նուին ընտրական ժողովակներէ , որոնք
կը կազմուին իւրաքանչիւր նահանգաց
մէջ այնչափ քաղաքացիներէ , որշափ
ծերակուտի անդամ և երեսփոխան ու-
նի այն նահանգն ազգային ժողովցն
մէջ , ՚ի բաց առեալ այն ամենքն որ տէ-
րութեան պաշտօն մը կը վարեն , անոնք
չեն կրնար ընտրական ժողովակին մաս-
նակցիլ : Խսկ այս ընտրողները կ'անուա-
նուին ընդհանուր քուէարկութեամբ .
ցանկերով այնչափ անուն որշափ քուէ
ունի այն նահանգը : Այս պատգամա-
ւորաց ընտրութեան քուէարկութիւնը
կ'ըլլայ նախագահական ընտրութեանց
նախընթաց տարւոյն նոյեմբերի տուա-
ջին երկուշաբթիէն ետքն եկող երեք-
շաբթի օրն , և նախագահական ընտրու-
թիւնքն ալ կը կատարուին հետեւալ
գեկուեմբերի չորեքշաբթի օրը : Նախա-
գահն ու Փոխ-Նախագահը չեն կրնար
մի և նոյն նահանգին մէջ ընտրուիլ :
Ծերակուտից ժողովն ու երեսփոխա-
նաց ժողովը կը գումարուին փետրուա-
րի երկրորդ չորեքշաբթի օրը քուէից
պաշտօնական լիճակարկութիւնը կա-
տարելու ըստ նահանգաց : Որպէս զի
մէկն ընտրուի , պէտք է որ բացարձակ
մեծամասնութիւն ունենայ քուէից : Ե-
թէ ընտրելոց մէկն ալ մեծամասնու-
թիւն չունենայ քուէից , անմիջապէս
կը գումարուի երեսփոխանաց ժողովը
և նախագահ կ'ընտրէ մէկն անոնցմէտ ,
գոնէ առաջին երեքին , որ մեծաթիւ
քուէ ունեցան : Այս դէպքիս մէջ ե-
րեսփոխանք ոչ թէ անհատարար կը
քուէարկեն , այլ ըստ նահանգաց ,

այնպէս որ իւրաքանչիւր նահանգ մէկ
մէկ գուէ կ'ունենայ . Ուոտ Այլէնտ և
Տելառուեր , որ քան զամենն փոքրադզյն
նահանգներն են , Նիւ-Եօոք և Օհիոյ
նահանգաց հաւասար կշիզք ունին :

Բոլոր այս աշխատալի կազմակերպու-
թիւնն այս անգամ վիր ՚ի վայր եղաւ .
միայն առաջին գործն ըստ կանոնի կա-
տարուեցաւ :

Նախագահական պատգամաւորներն
ընտրուեցան 7 նոյեմբերի . Արդէն վեց
ամիս առաջ ամեն բազմամարդ կեղու-
նատեղուանը մեծամեծ ժողովներ կը
գումարուէին , որոնց մէջ հրապարակաւ
վիճաբանութեան նիւթ կ'առնուէին ար-
ժանաւորքն նախագահութեան կամ
փոխ-նախագահութեան , և ընդայելոց
յայտարարութիւնքն (platforms) կը
քննուէին :

Անողոքեկի պատերազմն , որով տաօր
տարու ընէ ՚ի վեր մէկմէկու գէմ կը
կուռէին ընկերհաշտական (démocrati-
que) կամ հարաւոյին կուսակցու-
թիւնն ու հասարակապետական կամ
հիւսիսային կուսակցութիւնն , որ յիշ-
խանութեան էր , բնականապէս ալ առ-
ւելի արծարձեցաւ երր վերջնական լու-
ծումը մօտեցաւ : Այսպիսի գոյրագին
և անհաշտելի բանակառուութիւնն մը ոչ
երրէք ունեցեր էին Միացեալ-նա-
հանգք , որուն պատճառներն ու բնու-
թիւնն համառօտիւ յիշենք այս տեղ :

Յետ պատերազմին երկպառակու-
թեան (secession) , յաղթական միա-
բանողաց մասին մէջ երկու կուսակցու-
թիւնք ձևացան : Մէկ կուսակցութիւնը
կ'ըսուէր հասարակական կանաչանաց ,
որոնք կ'ուղէին վարուիլ հարաւայնոց
հետ իրեկ պարտելոց , և բռնութեամբ
երկար ժամանակ ապստամբ նահանգ-
ներն ընկենալ հիւսիսայնոց ծանր լժոյն
տակ : Միւս կուսակցութիւնը կ'ըսուէր
ընկերնայտականաց , որոնք բոլորով
սրտիւ կը փափագէին ՚ի միութիւն բե-
րել հերձեաները , և քաղցրութեամբ
փարուիլ անոնց հետ : Ճնապղնի (Johns-
ton) նախագահութեան ժամանակ , որ
իշխանութիւնը ձևակ առաւ լինգոլին

մօհու ընէն ետքը, երկրորդ կուսակցութիւնն յաղեց: Բայց երբ կրանդ հասաւ իշխանութեան յամին 1868, անողոքիւն կարծիքը տիրացաւ կառավարութեան խորհրդոցը մէջ, Գունդ մը քաղաքական բախտախնդրոցաց թափեցաւ հարաւայնոց վրայ, և սեերուն կրիցն առապարէղ տաղով և անոնց դիւրահաւանութիւնն իրենց նպաստ առնելով, անյագ պայուսակաւորներն է (carpet-baggers) յաջողեցան այն նահանգաց մեծագոյն մասին մէջ անուանել տալ իրենց անձնաառուր օրէնսդիր ժողովներ և կառավարութիւններ, որոնք մէկէն սկսան առաջ վարել առերեցին օրինական բռնաւորութեան մը ամեն մտացածին խորհուրդներն ընտրութիւններն անամօթաբար խարդախեցին. կամոյական հարկերով բեռնաւորեցին մասնաւորապէս զրեթէ բոլոր սպակակ ցեղի մարդիկը. Ընկերհաշտականները բիւրաւոր հարստահարութեանց ենթարկուեցան: Այսպիսի բռնտորական վարմունք մը շատ անգամ տեղի տուաւ արինահեղ կոիւներու, և կրանդ զօրապետն ամեն անգամ գրգռողաց օգնութիւն դրկեց: Բաց ՚ի ասոնցմէ, բազմաթիւ աշխարհաբարող դատեր յերեւան բերին անլուր կաշտակերութիւններ դաշնակցական վարչութեան ամեն ճիւղերուն մէջ, Նախագահին ներողամուռութիւնն առ հարստահարողս, նախանձաւորութիւնն որով կը վարագուէր անոնց ոճադրութիւններն, ատելութիւնն որով կը հալածէր պաշտօնեալցն որ արդարութեան կը յանձնէին այն յանցաւրները, հաւասարապէս այն դատերուն նման կայթակական էին:

Զեղծմունքն այնչափ տիրեր էր որ հասարակապետական կուսակցութեան ընտրութիւններն ՚ի նախագահութիւն և ՚ի փոխնախագահութիւն իրենց յայտագում է եկեր, իբր թէ այն սպազուկ քաղաքագէններն երբ հարաւայնին նահանգներն հասան, ուրիշ գրամագլուխ ըստներն բայց եթէ ճամապարէն ուղարկութէ (carpet-bag):

արտօրութեանց մէջ բարձրաձայն կը քարոզէին թէ անտառինելի հարկ էր արմատական վերանորոգութիւնները ընել: կրանդ զօրապետը ժամանակ մը փայփայեց խորհուրդն ներկոյանալու երրորդ անգամ մ'ալ նորիագահ ընտրուելու, Ամերիկոյի Ասահմանադրութեան մէջ չկայ յօդուած մը որ որոշակի արգելու Նախագահին իշխանութեան գարձադարձ նորոգութիլը, սակայն աւանդութիւնն՝ Ռւոշինկդրոնին ժամանակէն սկսեալ, թոյլ չի տար բայց մէկ անգամ միայն կրկնել ընտրութիւնը: Հասարակային կարծիքն այնպէս զէմելու երրորդ ընտրութեանն (third term), որ կրանդ չհամարձակեցաւ պնդել իր խորհրդոցը մէջ: Հասարակապետականաց նուիրակն ՚ի նախագահութիւն էր Հեղզ, Ընկերհաշտականացն Սամուէլ Դիլտէն: Քանի մը ուրիշ անկանոն նուիրակութիւններ ալ կային, ինչպէս էր օրինակի համար կուսակցութիւնն, որ անհատնում թըղթադրամ կ'ուղէ հանել: Թղթադրամին այս խնդիրը, Միացեալ-Նահանգաց ելեմտական ննդրոց մեծերէն մէկն է:

Վերջինիեւալ երկու կուսակցութեանց պայքարն անողքելի եղաւ: Հասարակապետականք ամեններն խիզճ չըրին բոլոր վարչական ուժերնին ժամանակ ՚ի նպաստ իրենց նուիրակներուն, Պաշտօնական նուիրակութեանց այսպիսի չափազանց ապերասանութիւն տեսնուած չէր: Ամեն կարգի պաշտօնաւոր սափակուեցան հանգանակելու ընտրութեան ժախուցը՝ պարտադիր զեղչամամք 2½ առ ¼ իրենց ամսական թոշակացը վրայ. ապա թէ ոչ՝ պաշտօնին կը կորունցունեին: վասն զի տարակցյա չկար, որ եթէ ընկերհաշտականը յաղթելու ըլլային, անոնց առաջին գործը կ'ըլլար, ինչպէս հնուց ՚ի վրբ սովորութիւն էր Ամերիկայի հասարակապետութեան մէջ, փոխել բոլոր վարչութիւնը, սկսեալ բարձրագոյն պաշտօնատարէն մինչև խոնարհագոյն պաշտօնատարը, և անոնց տեղը փոխնակակն իրենց վաստակութեան արժա-

նաւոր անձինք։ Ըստ այսմ ամեն նոր ընտրութե Նախագահի՝ գոնիեա և 2000 տեղիք կը գատարկուին։

Այսպիսի աւազելի վիճակ մը, որ ուրիշ հակացիո չունէր բայց փոքր մասմի բացարձակ ազատութիւնն տպադրութեան և ակըմքելու իրաւունքը, հարկաւ բարի վախճան մը չէր կրնար ունենալ։ Շուտ մը իմացուեցաւ որ 869 ընտրողաց, որոնք նախագահական ընտրութեան ժողովը կը կազմէին, 184 քուէ նպաստաւոր էին ֆիլտէնի, որ էր ընկերհաշտականաց նուիրակը, և 166 քուէ նպաստաւոր էին Հէյզի, որ էր հաստրակապետականաց նուիրակը։ Միւս 19 քուէներն, որ կը վերաբերէին Ֆլորիտայի ու հարաւային կարողինայի և Լուիզիանայի, անորոշ կը մնացին։ Յաղթութիւնն, որ այս երեք նահանգաց մէջ, մէկմէկու ձեռքէ կը յափտակէին, քանի մը վաւերական կամ ոչընչացած քուէներէ կախումն ունէր, և իւրաքանչիւր կուսակցութիւն ինքը զինքն յաղթող կը համարէր։ Դիլտէն որ ընտրական ժողովըն օրինական մեծամասնութիւնն ունենալու համար մի միայն ձայնի մը պէտք ունէր, և յաղթանակելու համար այն երեք նահանգաց մէկուն միոյն քուէն բաւական էր։ ուր Հէյզ յաղթանակելու համար այն երեք նահանգաց ալ քուէին պէտք ունէր։

Այս անստուգութեան կարելութիւնն հասկընալու համար պէտք է զիտնալ, որ Ամերիկայի Ասահմանագրութեան մէջ եղած թերութիւններէն մէկն ալ այն է որ ընտրական միակերպ օրինադրութիւն մը չունի։ Միացեալ նահանգաց իւրաքանչիւրն ուզածին պէս կը կանոնաւորէ քուէարկութեան ձեւն ու քուէից ստուգութիւնն, առանց միջամտութեան գաշնակցական իշխանութեան։ Արդ լութիվանա ու Ֆլորիտա և հարաւային կարողինա այնպիսի օրինադրութովներ ու կառավարութիւններ ունէին որոնց մէջ պայուսակառորք կը տիրանային առանց խզի։ Արոնք գոհ չըլլալով ընտրական ցուցակաց մէջ

յայտնի խարդախութիւններ ընելու, քուէներն ստուգելու պաշտօնարան։ Ներն (returning-boards) այնպիսի անձանցմէ կազմէր էին, որոնք ամենն ալ հասարակապետական պատգամաւորներ էին։ Այս պաշտօնարաններն որոնք Նահանգին քուէները պիտի ստուգէին, նոյն իսկ տեղական հրահանգաց պատուիրածին համեմատ, պէտք էին ամբողջապէս գուրս ձգել այն գաւառաց քուէներն, ուր խարդախութեան կառակած ագեր էր, և բոլորական գումարն ընել առանց խառնելու մէջը այն գուրս ձգուած գաւառները։ Որով այն պաշտօնարանները յանացին խարդախութեան մէջ բռնել այնչափ հակառակորդ գաւառներ, որչափ բաւական էին իրենց կողմին հակել տալու մեծամասնութեան նժարը։ Ուստի այն որդշողութիւնըն, որոնք շաբաթներով ուշացան, անբողոքելի էին։ Նախընթաց Ազգաժողովով մէջ թէպէտն հասարակաց կանոնադրութիւն (joint-rule) մը կար, որ նոյն Ազգաժողովովն իւրաքանչիւր ժողովարանին մեծամասնութեանն իրաւունք կաւ տար մերժելու նահանգի մը քուէն, սակայն այս կանոնագրութիւնը վերջերս ծերակուտի ժողովն ընթեր էր։

Տարակուսական նահանգաց ստուգելու պաշտօնարաններն լրբարար ընտրութեան վաւերական զիր տուին նախագահական այն ամեն ընտրողաց, որոնք հասարակապետական կուսակցութենէ էին։ Ընկերհաշտական կուսակցութենէն և ոչ մէկն ընտրուեցաւ։ Որով ճիշդ մեծամասնութիւնը Դիլտէնէն կը փոխադրուէր տու Հէյզ, և երկրին բարձրագոյն ատեանն անամօթաբար խաղալիկ եղեր էր խումբ մը աներես քայլավարչաց։ Ընկերհաշտական իրենց արգար իրաւամբքը զիւնուած, որոնց նպաստաւոր էր նաև հասարակաց կարծիքն, այնպիսի ուժով բարձրածայն բողոքեցին, որ գալնական Ազգաժողովովն երկու ժողովարանները ստիպուեցան մտիկ ընել անոնց գանգատանացը։ Բայց այն երկու

ժողովարաններն , որոնց մէկը մէկ կու-
սակցութեան և միւսը միւս կուսակցու-
թեան կողմնակից էր , մեծապէս զը-
ժուարեցան միարանելու դարման մը
գտնել : Յետ երկար վիճմանց , վերջա-
պէս իրաւախութեան մը եկան եր-
կու կողմանէ , և որոշեցին մասնաւոր
Ատեան մը կամ Յանձնամողով մը ,
զոր կը կազմէին 5 երեսփոխանք , 5
անդամք ծերակուաի , և 5 դատաւորք
վերին Դատարանին : Բոլոր փետրուար
ամիսն անցաւ այս 15ից և Յանձնամոց
դոփոյն ու միացեալ երկու ժողովարա-
նաց ազմկալից գումարումներով : Մի-
ջոց մ'եղաւ , որ ուղեցին իրաւախութ-
եան մը գ.ալ.՝ տալով նախագահու-
թիւնն առ Դիլուէն ընկերհաշտական և
փոխախագահութիւնն առ Ուիէլը
(Wheeler) հասարակապետական : Բայց
վերջապէ Յանձնամողովն ութքուէիք
ընդդէմ եօթանց , հետզհետէ տուաւ
առ Հէյզ , որ հասարակապետականաց
նուիրակն էր , հարաւային կարողինայի
ու Ֆլորիտայի և Լուիզիանայի երկրա-
յական քուէները , որոնց վրայ հասա-
րակապետականք արեամք չափ մրցե-
ցան , և Պրէտլի (Bradley) անունով
դատաւորին քուէն եղաւ որ վերջին
հարուածը տուաւ հաւասարակշտու-
թեան :

Հիմակուընէ բոլոր Միացեալ-Նա-
հանգաց մէջ այս երգիծարանութիւնը
կ'ընթանայ թէ այս առաջին անդամն է
որ հասարակապետաթիւնն Նախա-
դահ ունեցաւ ոչ ժողովողէն , ոչ ժո-
ղովէն , այլ Պրէտլիէն :

Հատ ծանր էր այս գայթակղու-
թիւնն , ընկերհաշտականք բողոքեցին
հասպարակաւ . բայց գուցէ հանդար-
տին ապասելով օրինական վրէժնին
հանել ասկէ չսրս տարիէն : Վաղարական
կուսակցութեանց դժուարին չի գար

իրենց օրուանն ապասել . բայց տրդեզ
կրնան նոյնպէս համբերել հարաւային
այն Նահանգներն , եթէ տիրող կու-
սակցութիւնը դարձեալ շարունակէ ա-
ռաջին հարստահարութիւններն ու բըռ-
նաբարութիւնքը : Ահա այս է Միա-
ցեալ-Նահանգաց մեծ վտանգն որ առ-
գուրս կայ :

* *

Նորընտիր նախագահն կը կոչուի
Ռութէրֆորդ Բ. Հէյզ , և արուեստիւ
փաստարան է , ինչպէս է նաև իր նա-
խանձորքը , և ոչ ոք կը կարծէր զինքը
քաղաքագէտ նշանաւոր անձն մը : Հէյզ
ծներ է 4 հոկտեմբերի 1822 , սրով 55
տարեկան կ'ըլլայ . Հայրենիքն է Տե-
լլուսեր , Օհիոյ Նահանգին մէջ : Երբ
երկպառակութեան պատերազմը ծա-
գեցաւ , յամին 1864 , Հէյզ դատարան-
ները ձգեց և զինուորեցաւ . Օհիոյի կա-
մաւորաց մէջ , և զինուորական ամեն
աստիճաններէն մէկիկ մէկիկ անցնե-
լով մինչև եղաւ ջկասի զօրապետ (ցե-
նուրա դէ Երգած) : Սառւահ-Մառնդէ-
նի պատերազմին մէջ ծանր վիրաւո-
րուեցաւ , բայց մինչեւ վերջն իր ջոկա-
տին զլուխը մնաց :

Պատերազմէն եաւ Ազգաժողովոյն ե-
րեսփոխան ընտրուեցաւ , ուր ամեննեին
նշանակութիւն մը չէ ունեցիր . Վերջն
ալ Օհիոյի Նահանգապետ անուանուե-
ցաւ :

Հիմա ամենքը կը սպասեն տեսնել
թէ արդեզ պիտի գիտնայ խոհական
և զգաստ ընթացիկք մոռցունել տալ
այն անարժան կերպն որով իր ընարու-
թիւնը կատարուեցաւ : Առ Ազգաժո-
ղովն ուղղած առաջին բանքն շատ յու-
սդրական են :

